2018, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (524)

# Էջմիածնի Տպագիր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Շնորհավոր Վեհափառ եւ Սուրբ Ծնունդ



### ՆՈՐ ՏԱՐՎԱ ԳԻՇԵՐ

Թե աշխարհում փակ դռներ կան,
թող որ բացվեն այս գիշեր,
Ու Նոր տարին նոր խնդությամբ
թող ներս մտնի այս գիշեր,
Թե կան դպրարկ, համր տներ,
մանկան ճիչով թող լցվեն,
Ով փնտրում է սրտակից մեկին,
հանկարծ գտնի այս գիշեր:
Թե կան լացող, տխուր աչքեր, թող
ծիծաղեն այս գիշեր,
Վանչող ձեռքերն իրար հասնեն,
հրաշք ապրեն այս գիշեր:
Թե կան սրտեր՝ չար նախանձով,
դառնան բարի ու ներող,
Եվ ուրիշի ուրախ կյանքով
խանդավառվեն այս գիշեր:
Թե մոլորված անպորդներ կան,
դարձի թող գան այս գիշեր,
Արբագործված սիրով մտնեն իրենց
օջախն այս գիշեր,
Թե կան բախտի փշոտ ճամփեք, թող
ծաղկունքով կանաչեն,
Ու երգանիկ սպասումով բոլորն
արբեն այս գիշեր...
Թե աշխարհում պանդուխտներ կան,
թող տուն դառնան այս գիշեր,
Հայրենական հավերժությամբ
ողջագուրվեն այս գիշեր:

ՄԵՏԱՔՍԵ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*14 դեկտեմբերի* **ՀՀ վարչապետի պաշտոնակատարին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ՀՀ վարչապետի պաշտոնակատար տիար Նիկոլ Փաշինյանի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վարչապետի պաշտոնակատարին բերեց իր շնորհավորանքները՝ դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների կազմակերպման առիթով, ինչպես նաեւ ընտրությունների արդյունքում պրն Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքի արձանագրած հաջողությունների առնչությամբ: Նորին Սրբությունն ընդգծեց, որ ընտրություններին մասնակցած ՀՀ քաղաքացիների մեծամասնությունը վստահություն հայտնեց վարչապետի պաշտոնակատարին եւ «Իմ քայլը» դաշինքին՝ իր խաղաղ, ապահով եւ բարօր կյանքի կերտման հույսերով եւ ակնկալիքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց երկրի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում հասարակության մեջ վստահության, ազգային աշխարհասփյուռ կյանքում միասնության, համերաշխության եւ ներողամտության ոգու, փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության մթնոլորտի զորացման եւ ազգային ներուժի համախմբման անհրաժեշտությունը՝ ի շահ հայրենիքի եւ դարավոր ազգային իղձերի ու երազանքների իրականացման: Վեհափառ Հայրապետն ասաց, որ այս ճանապարհին Հայոց Եկեղեցին, հավատարիմ իր առաքելությանը, պիտի շարունակի իր ուժերի ներածին չափով եւ ողջ հնարավորություններով ջանքեր գործադրել հանուն անկախ հայոց պետականության եւ ազգային միաբանության ամրապնդման:

Իր հերթին պրն Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ջերմ խոսքերի եւ բարեմաղթանքների համար՝ շատ կարեւոր նկատելով այցելությունները հայոց հագեւոր կենտրոն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՀՀ վարչապետի պաշտոնակատարն արձանագրեց, որ երկիրը թեւակոխել է կարեւոր մի

փուլ, երբ առիթ է ընձեռվել վերահիմաստավորելու հայոց պատմության շատ էջեր: *«Հույս ունեմ, որ այն, ինչ այսօր Հայաստանում տեղի է ունենում, պետք է դառնա մի յուրօրինակ ապացույցն այն բանի, որ մենք մեր պատմության ընթացքում մեր ունեցած սխալներից եւ ընդհանրապես մեր դժբախտություններից, անհաջողություններից եւ հաղթանակներից կարողացել ենք մի ընդհանրական եւ կենարար դաս քաղել, որը պետք է կարողանանք ծառայեցնել մեր ժողովրդի, մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության բարօրությանը եւ ընդհանրապես մեր ժողովրդի իրավունքների պաշտպանությանը»*,- ասաց վարչապետի պաշտոնակատարը: Պրն Նիկոլ Փաշինյանն անդրադարձ կատարեց նաեւ արժեքներին եւ դրանց փոփոխման անհրաժեշտությանը՝ ընդգծելով այս շրջափուլում սեփական եւ այլոց իրավունքների, ազատությունների նկատմամբ հարգանքի կարեւորությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց հայրենական եւ ազգային կյանքի զանազան խնդիրների եւ հայրենիքում ու սփյուռքում Եկեղեցու առաքելության մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց ՀՀ վարչապետի պաշտոնակատարին Աստծո զորակցությունը՝ ազգօգուտ եւ հայրենաշեն ծրագրերի իրագործման ճանապարհին:

*16 դեկտեմբերի* **«Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցությանը**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամներին:

Հանդիպմանը կուսակցության առաջնորդ Էդմոն Մարուքյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց 7-րդ գումարման խորհրդարանում «Լուսավոր Հայաստանի» խմբակցության անդամներին, անդրադարձավ կուսակցության քաղաքական հայացքներին ու դավանած քրիստոնեական ավանդական արժեքներին՝ նշելով, որ առջեւում կան շատ անելիքներ, եւ այդ իմաստով մեծ պատասխանատվություն է դրված Ազգային նորընտիր ժողովի ուսերին: Տիար Մարուքյանն այս առաքելության համար կարեւորեց Հայոց Հայրապետի օրհնությունը՝ ընդգծելով, որ խմբակցության գործունեության մեջ նաեւ կարեւոր տեղ պետք է հատկացվի ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող քրիստոնեական հարուստ ժառանգության պահպանության խնդիրներին:

*Շարունակությունը՝ էջ 2*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### «Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցությանը

*Սկիզբը՝ էջ 1*

Այնուհետեւ «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամներին ողջունեց եւ իր բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը շնորհավորեց խորհրդարանականներին՝ ձեռք բերած վստահության քվեի համար, որը հնարավորություն է ընծայելու նրանց օրենսդրական գործունեությամբ իրականացնել իրենց բոլոր ծրագրերը, ամուր հիմերի վրա հաստատել հայոց պետականությունը, նպաստել հզոր եւ ապահով հայրենիքի կերտմանը:

Երկրի առջեւ ծառացած մարտահրավերների, դժվարությունների եւ խնդիրների հաղթահարման գործում, որոշումների կայացման մեջ իբրեւ զորության եւ ներշնչման ոգու աղբյուր, Հայոց Հայրապետը նկատեց անցյալի հետ հաղորդակցությունը, կարեւորեց ազգային ժառանգության ճանաչողությունը եւ կապը պատմության հետ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ օրինաստեղծ գործունեությունը կխարսխվի այն ավանդների եւ արժեհամակարգի վրա, որոնք դարեր շարունակ ուժ են տվել մեր ժողովրդին՝ հաղթանակելու, դիմագրավելու դարերի փորձությունները եւ վերապրելու պատմության բոլոր օրհասական պահերը:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին եկեղեցական կյանքի մարտահրավերներին, հոգեւոր ժառանգության պահպանության խնդիրներին եւ Եկեղեցի-պետություն հարաբերություններին: Վերջինիս առնչությամբ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին ինչպես պատմության ընթացքում, այնպես եւ այսօր շարունակելու է սատարել հայրենի պետությանը, որպեսզի հայոց ողջ ներուժի համախմբմամբ, սիրո եւ միաբանության մեջ, նվիրյալ եւ ազգաշեն ծառայությամբ կյանքի կոչվի աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ լուսավոր հայրենիք ունենալու տեսլականը:

### *18 դեկտեմբերի* Վերապատրաստման դասընթացներին մասնակցող եկեղեցականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպեց վերապատրաստման դասընթացներին մասնակցող Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած 16 եկեղեցականների հետ:

Դասընթացների պատասխանատու Եզնիկ արք. Պետրոսյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց հոգեւոր հայրերին, ապա ամփոփելով տարին՝ տեղեկացրեց, որ փետրվարի 11-ից սկսյալ վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 161 հոգեւորական՝ 127-ը Հայաստանից եւ Արցախից, 34-ը՝ Սփյուռքի թեմերից: Անդրադառնալով վերապատրաստման դասընթացների օգտակարությանը՝ սրբազան հայրը խոսեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ ունեցած հանդիպումների կարեւորության մասին, որոնք հնարավորություն են տալիս Եկեղեցու սպասավորներին Հայոց Հովվապետի հետ քննարկելու իրենց հովվական կյանքին առնչվող զանազան խնդիրներ եւ մարտահրավերներ:

Այնուհետեւ հոգեւորականներին իր օրհնությունը բերեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր հերթին կարեւորեց վերապատրաստման դասընթացների անցկացումը՝ նշելով, որ դրանք առիթ են տալիս հովիվներին առանձնանալու եւ մտորելու իրենց հոգեւոր առաքելության արդյունավորման մասին, ինչպես նաեւ հարստանալու նոր գիտելիքներով եւ միմյանց փորձառությամբ: Հայոց Հովվապետն ընդգծեց, որ թեմերում ծառայող հոգեւորականների հետ հանդիպումները եւ հավատացյալներին հուզող տարբեր հարցերի շուրջ քննարկումները մեծապես նպաստում են ապագայի տեսլականի իրականացման, Եկեղեցու հետագա գործունեության նախանշման գործընթացին:

Նորին Սրբությունը, իր գնահատանքը բերելով Եզնիկ սրբազանին՝ դասընթացների կազմակերպչական գործն ստանձնելու համար, արձանագրեց, որ ամենը կարվի, որ դասընթացներն ապագայում առավել արդյունաշատ լինեն եւ ընդգրկեն աստվածաշնչագիտությանը, հովվական աստվածաբանությանը եւ Եկեղեցու սոցիալական ծառայությանը վերաբերող նորանոր քննարկումներ: Վերջում Վեհափառ Հայրապետը քահանաներին մաղթեց ուժ, կորով ու Երկնավորի առաջնորդություն իրենց հոգեւոր առաքելության մեջ:

Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ հոգեւոր հովիվների հարցերին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը:

### *22 դեկտեմբերի* Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությանը



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրասիական միության մանկավարժական բուհերի ասոցիացիայի նախագահ, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Ալեքսեյ Լուբկովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պ.գ.դ, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպմանը տիար Ռուբեն Միրզախանյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց կրթական երկու հաստատությունների միջեւ առկա համագործակցության եւ դրա ընդլայնման հեռանկարների վերաբերյալ:

Ողջունելով երկու երկրների մանկավարժական համալսարանների միջեւ ձեւավորված սերտ կապերը եւ դրանց խորացմանն ուղղված քայլերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց նման գործակցությունը երիտասարդ սերունդների կրթության եւ դաստիարակության գործում: Իր օրհնությունն ու գնահատանքը բերելով համալսարանների ղեկավարներին՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ հաստատությունների միջեւ վերակնքված համագործակցության պայմանագիրը նոր հնարավորություններ կընձեռի համալսարանականներին եւ կնպաստի երկու համալսարանների կապերի առավել արդյունավորմանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նաեւ փաստեց, որ Մայր Աթոռի կրթական կառույցների եւ Հայաստանի բարձրագույն տարբեր ուսումնական հաստատությունների, ինչպես նաեւ հանրակրթական դպրոցների միջեւ հաստատված է սերտ գործակցություն, ինչն առիթ է տալիս կրթության ու գիտության ապագա մշակներին ծանոթանալու ազգային-եկեղեցական եւ հոգեւոր արժեքներին:

Իր հերթին Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ալեքսեյ Լուբկովը եւս կարեւոր համարեց երկու համալսարանների միջեւ համագործակցության պայմանագրի վերակնքումը եւ հարաբերությունների հետագա զարգացումը: Զրույցի ընթացքում պրն Լուբկովն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց նաեւ ռուս ժողովրդի կյանքում Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ունեցած դերակատարությունն ու ներկայիս գործունեությունը, ինչպես նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր ուսումնական հաստատությունների հետ փոխգործակցությունը:

Հանդիպմանը երկուստեք կարեւորվեց երիտասարդ սերնդի հոգեւոր կրթությունն ու դաստիարակությունը, որով ներկայիս մարտահրավերների պայմաններում հնարավոր է անաղարտ պահպանել ազգային-հոգեւոր ավանդույթներն ու բարոյական արժեքները: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ ձեւավորված եղբայրական կապերին եւ սերտ համագործակցությանը տարբեր ոլորտներում:

# Սարկավագական ձեռնադրություն Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Դեկտեմբերի 25-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օրը, որը նաեւ Եկեղեցու անդաստանում ծառայող սարկավագների տոնն է:

Այս առիթով Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը: Ս. Պատարագի արարողության ընթացքում կատարվեց նաեւ սարկավագական ձեռնադրություն:

Նախօրեին՝ դեկտեմբերի 24-ի երեկոյան, Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Բ լսարանի 14 ու քահանայից պատրաստության Բ լսարանի 3 սան ստացավ դպրության աստիճան, ճեմարանի Դ լսարանի 11 եւ քահանայից պատրաստության լսարանի 2 սան՝ ուրարակրության աստիճան, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե եւ Զ լսարանի 29 ու քահանայից պատրաստության լսարանն ավարտած 6 սան՝ կիսասարկավագության աստիճան:

Այս տարի Ս. Ստեփանոսի տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Հովնան սրբազանի ձեռամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ քահանայից պատրաստության լսարանի 35 սան:

*Շարունակությունը՝ էջ 3*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոն եւ Էջմիածնի բարեգործական ճաշարան



Դեկտեմբերի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով այցելեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոն՝ մանուկներին փոխանցելու իր օրհնությունն ու շնորհավորանքները:

Կենտրոնում խնամվող երեխաները Վեհափառ Հայրապետի հետ արտասանեցին Տերունական աղոթքը, կատարեցին նաեւ հայրապետական մաղթերգը: Հայոց Հովվապետը երեխաներին բաժանեց նվերներ, հետաքրքվեց նրանց առօրյայով, զրուցեց մանուկների նախասիրությունների շուրջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կարեւորելով կենտրոնի առաքելությունը, իր գնահատանքը բերեց Սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանին եւ կենտրոնի աշխատակիցներին՝ ցուցաբերած պատասխանատվության եւ հոգածության համար, հորդորեց առավել ջանասիրությամբ շարունակել կրթել ու դաստիարակել երեխաներին, նրանց հոգիները լցնել ուրախությամբ, ջերմությամբ եւ սիրով, որպեսզի նրանք դառնան ազգի արժանավոր զավակներ:

**Նույն օրը Հայոց հայրապետը եղավ նաեւ Էջմիածնի բարեգործական ճաշարանում՝** իր օրհնությունն ու շնորհավորանքները բերելու միայնակ տարեցներին եւ կարիքավորներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ճաշարանի ամենօրյա այցելուներին բերեց քաջառողջության եւ անվրդով կյանքի իր բարեմաղթանքները, տոների կապակցությամբ փոխանցեց նվերներ:

Վերջում Վեհափառ Հայրապետը նաեւ ճաշեց տարեցների հետ, պատասխանեց նրանց հուզող հարցերին: Զրույցի ընթացքում հայրդիները Նորին Սրբությանն իրենց երախտագիտությունը հայտնեցին Մայր Աթոռի եւ ազգային բարերարների հոգատար վերաբերմունքի համար:

Մայր Աթոռի հովանու ներքո Հայաստանի տարբեր քաղաքներում այսօր գործում է բարեգործական հինգ ճաշարան, որտեղ ամեն օր կանոնավոր սնունդ է ստանում 900 անձ:

# Սարկավագական ձեռնադրություն...

*Սկիզբը՝ էջ 2*

Արարողության ընթացքում սրբազան հայրը ձեռնադրության խորհրդի ավարտին անդրադարձավ ս. Ստեփանոսի կերպարին ու նահատակությանը, ապա խոսեց սարկավագության խորհրդի մասին:

*«Սիրելի՛ սարկավագ եղբայրներ, հոգեւոր աստիճանը փառքի աստիճան չէ, հոգեւոր աստիճանը ինչքեր կուտակելու աստիճան չէ, հոգեւոր աստիճանը հպարտության աստիճան չէ, այլ՝ խոնարհության, ծառայության եւ նվիրումի:*

*...Սարկավագություն արեք, ծառայություն մատուցեք հավատացյալների մեջ, ծառայություն բերեք անհավատների շարքերում՝ նրանց եկեղեցի բերելով, ծերանոցներ այցելեք, բանտարկյալներին, հիվանդներին այցելեք եւ ընդհանրապես՝ ծառայություն մատուցեք բոլոր նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:*

*Եվ ահա այս գիտակցությամբ եկեք այս պահին ուխտելու, որ մեր կյանքը բոլորանվեր կերպով պետք է ծառայեցնենք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն եւ նրա աստվածադիր կանոններին»,-* նորընծաներին պատգամեց Հովնան եպիսկոպոսը:

Սրբազանը ձեռնադրության առիթով շնորհավորեց Մայր Աթոռի ողջ միաբանությանը՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, ինչպես նաեւ՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությանը, նորաթուխ սարկավագների ծնողներին ու հարազատներին:

Ս. Պատարագի ավարտին եկեղեցականաց դասը եւ ներկա բարեպաշտ ժողովուրդը հնարավորություն ունեցան նաեւ համբուրելու Մայր տաճարի ավանդատուն-թանգարանից Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի բերված ս. Ստեփանոսի մասունքով Աջը եւ ստանալու նրանից բխող օրհնությունը:

Պատարագից հետո նորընծաներին եւ Մայր Աթոռի միաբան սարկավագներին ընդունեց Նորին Սրբությունն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ Հովնան եպս Հակոբյանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի:

Նորին Սրբությունը, շնորհավորելով նորաթուխ սարկավագներին՝ ձեռնադրության կապակցությամբ, նշեց, որ նրանց առջեւ նոր հորիզոններ են բացվում՝ իրագործելու Հայ Եկեղեցու անդաստանում նվիրյալ եւ անձնդիր ծառայության իրենց տեսիլքը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Մայր Աթոռի տարբեր կառույցներում եւ թեմերում սպասավորող սարկավագներն իրենց նվիրյալ ծառայությամբ նպաստում են Հայ Եկեղեցու պայծառությանն ու սրբազան առաքելության արդյունավորմանը: Հայոց Հովվապետը հորդորեց սարկավագաց դասին իրենց վարքագծով եւ անձնվեր ծառայասիրությամբ հավելել Հայոց Եկեղեցու պատիվն ու համբավը՝ մաղթելով, որ Աստծո ողորմությամբ արժանանան նաեւ քահանայական կոչմանը եւ իբրեւ օծյալ եկեղեցականներ՝ իրենց սպասավորությունը բերեն տարբեր համայնքներում:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Սուրբ Հոգու առաջնորդությունը նրանց համար, որ նրանց կյանքն իմաստավորվի բարի եւ օրհնյալ գործերով:

# Գիտաժողով՝ նվիրված «Արարատ» ամսագրի 150-ամյակին

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մայր Աթոռի գիտական հսկան» թեմայով գիտաժողով՝ նվիրված «Արարատ» ամսագրի 150-ամյակին: «Արարատ» ամսագիրը՝ հիմնադրված 1868 թվականին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական հայագիտական առաջին պարբերականն էր Կովկասում, որը մեծապես նպաստել է գիտության զարգացմանը:

Գիտաժողովն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո Մայր Աթոռի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ հրատարակչական բաժինների տնօրեն Արարատ քհն. Պողոսյանը հանդես եկավ բացման խոսքով:

Տեր հայրը փաստեց, որ «Արարատ» ամսագիրն անցել է երկար, բարդ ու դժվար ճանապարհ, ընդունել 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի մարտահրավերները, դիմակայել, առաջ քաշել իրենն ու ապացուցել իր ժամանակին եւ գալիք դարերին, որ ինքը բացառիկ է, լավագույններից մեկն է թե՛ որպես կրոնական հայ մամուլ եւ թե՛ որպես լրագրության պատմության մեջ բովանդակալից, իսկ ավանդույթով՝ երկարակյաց: «Արարատը» կարեւոր դեր է խաղացել Հայ Եկեղեցու, կրոնի, բարոյագիտության եւ հարակից այլ խնդիրների ուսումնասիրման գործընթացում՝ խոշոր ավանդ ունենալով հայագիտության զարգացման գործում:

Այնուհետեւ գիտաժողովի մասնակիցներին իր օրհնությունը փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*«Այսօր դուք համախմբվել եք ձեր զեկույցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգությունը:*

*Երջանկահիշատակ Գեւորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք եւ նրա խրախուսմամբ հիմնադրված «Արարատ» ամսագիրը հարյուր հիսուն տարի առաջ կարեւոր առաքելության լծվեց ազգային-եկեղեցական մեր անդաստանում: Ինչպես նշվում է ամսագրի առաջին համարի նախաբանում, «Արարատը» հանձնառությունն էր կրոնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացվող ուսումնասիրություններով ու հոդվածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը: Ամսագիրը կարեւոր ներդրում ունեցավ հայ աստվածաբանական մտքի, հայագիտության ու պատմաբանության զարգացման գործում: Մեծանուն հոգեւորականներից Մաղաքիա արք. Օրմանյանի գլխավորությամբ նոր սերնդի հոգեւորականները, Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդ եկեղեցականները հանդես եկան դավանաբանության, ինչպես նաեւ ընդհանուր աստվածաբանության վերաբերյալ գիտական լուրջ հոդվածներով, նշանավոր աստվածաբանների աշխատությունների թարգմանություններով: «Արարատի» էջերում հիշարժան վաստակ թողեցին նաեւ նշանավոր հայագետները: Ամսագրի մեծարժեք նյութերի ցանկը հարստացրել են ձեռագրագիտության, մանրանկարչության, համեմատական բնագրերի, արվեստի ու մշակույթի վերաբերյալ հրապարակումները: Դեռեւս այդ շրջանում, երբ Մայր Աթոռի պաշտոնական գրություններում գլխավորապես գրաբարի գործածումն էր սահմանված, «Արարատ» ամսագրի համար նախընտրելի համարվեց գրաբարին մերձ աշխարհաբար լեզվի օգտագործումը, որպեսզի այն ընթերցողների ավելի լայն շրջանակի հասու լինի:*

*Հատկանշական է նաեւ, որ «Արարատ» ամսագիրը լույս էր տեսնում այնպիսի մեծանուն հոգեւորականների խմբագրությամբ, որպիսիք էին Աբել արք. Մխիթարյանը, Խորեն վրդ. Ստեփանեն, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանը եւ ուրիշներ: Մեր խորին հարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գեւորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատի» բոլոր երախտավորների լույս հիշատակի առջեւ:*

*Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հրատարակվող նյութերի հատուկ ընտրությամբ «Արարատ» ամսագիրը դարձավ այդ ժամանակաշրջանում Կովկասում առաջին գիտական լուրջ հանդեսը, որի շուրջ համախմբված հայ աստվածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր ավանդ բերեցին գիտության ճյուղերի զարգացմանը: Այսօր էլ «Արարատ» ամսագրի հարուստ գիտական նյութերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրությունների, Սինոդի գրագրությունների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրության վերաբերյալ տեղեկությունները օգտաշատ գիտելիքների աղբյուր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար»,-* ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ մատենադարանի տնօրինությանը եւ գիտաժողովի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց:

Հայրապետական պատգամից հետո գիտաժողովն սկսեց իր աշխատանքը: Առաջին նիստին զեկույցներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դեւրիկյանը («Էջմիածնականության» գաղափարի արծարծումը «Արարատի» էջերում»), ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի դասախոս, բ. գ. դ. Սերժ Սրապիոնյանը («Արարատը»՝ Մայր Աթոռի տարեգիր»), ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բ. գ. թ. Նաղաշ Մարտիրոսյանը («Հրապարակախոսությունը «Արարատ» ամսագրում»), ՀՀ ազգային գրադարանի փոխտնօրեն Հայկանուշ Ղազարյանը («Արարատի» անդրադարձը գրադարանային ոլորտին») եւ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վիկտոր Կատվալյանը («Արարատ» ամսագիրը հայ գրերի գյուտի եւ տպագրության համազգային մեծ հոբելյանի տոնակատարության մասին»):

Երկրորդ նիստին զեկուցեցին Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պ. գ. դ. Գեւորգ Տեր-Վարդանյանը («Արարատ» հանդեսի կեսդարյա բնագրական վաստակը»), ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ. Էդիկ Մինասյանը («Արարատ» ամսագրի պատմագիտական նշանակությունը»), ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հայագիտական եւ սոցիալ-մշակութային առարկաների բաժնի գլխավոր մասնագետ, պ. գ. թ. Արման Մալոյանը («Արարատ» ամսագրի ավանդը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ»), ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Մաշտոցյան մատենադարանի ավագ գիտաշխատող պ. գ. թ. Արսեն Հարությունյանը («Վիմագրությունը «Արարատի» էջերում»), ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. դ. Հայկանուշ Մեսրոպյանը («Հայ բարբառագիտության հարցերը «Արարատ» հանդեսի էջերում»), Մանկավարժական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ. Վազգեն Համբարձումյանը («Հայերենի տեսության եւ կանոնարկման հարցերը «Արարատի» էջերում») եւ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Տորք Դալալյանը («Արարատի» էջերում հրատարակված բանահյուսական նյութերի ընդհանուր բնութագիրը»):

Երրորդ նիստին բանախոսություններ ներկայացրին Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ Արփի Վարդումյանը («Կոմիտասը եւ «Արարատ» հանդեսը»), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանը («Հովհաննես Թումանյանը եւ «Արարատ» ամսագիրը. (խմբագիրներ Գալուստ Տեր-Մկրտչյանի եւ Գարեգին վարդապետ Հովսեփյանի բարեկամության պատմությունից»), «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արփինե Չանթիկյանը («Կրոնագիտական-աստվածաբանական հոդվածները «Արարատ» ամսագրում»), ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին եւ միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Լուսինե Վարդանյանը («Շարականի ուսումնասիրությունները «Արարատ» ամսագրի էջերում»), Հայաստանի ազգային արխիվի կինոֆոտոֆոնո փաստաթղթերի եւ ապահովագրական պատճենների մասնաճյուղի վարիչ, պ. գ. թ. Ավագ Հարությունյանը («Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի թեման «Արարատ» ամսագրի էջերում») եւ ՀՀ Սփյուռքի նախարարության Համահայկական ծրագրերի վարչության մշակութային, սպորտի եւ երիտասարդական ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանը («Պարսկաստանի հայ գաղթօջախը «Արարատ» ամսագրի էջերում 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին»):

# ՁԻԱՀ՝ դատավճիռ, թե՞...

ՁԻԱՀ – ինչում է կարծես դատավճիռ: Եվ, իրոք, անբուժելի համարվող այս հիվանդությունը շատերը զուգորդում են մահվան հետ: 21-րդ դարի ժանտախտ, որի հակաթույնը դեռեւս գտնված չէ: Այս հիվանդության հոգեբանական ասպեկտին ավելի խոր ծանոթացա, երբ սկսեցի աշխատանքս ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում: Ամեն օր հանդիպելով ՁԻԱՀ/ՄԻԱՎ վարակակիրներին եւ հետեւելով նրանց հոգեկան առողջությանը՝ ինձ համար պարզ դարձավ, որ բացի ֆիզիոլոգիական փոփոխություններից, ինչը բուն հիվանդության հետեւանքն է, կա մի կոճակ, որն արագացնում է արդեն իսկ գործի դրված, օրգանիզմը քայքայող մեխանիզմը: Վախ մահվանից. չեմ սխալվի, եթե ասեմ, որ այդ վախն ունեն ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդ բոլոր մարդիկ:

Վերջին տարիներին դասական բժշկությունն ավելի հաճախ է ընդգծում այն փաստը, որ շատ բաներ գալիս են մարդու մտքից, նրա հուզական վիճակից: Ժողովրդական լեզվով ասած՝ «ամեն ինչ մարդու գլխում է»: Եվ իսկապես՝ միեւնույն հիվանդությունը՝ իր բոլոր դրսեւորումներով, տարբեր մարդկանց պարագայում տարբեր ձեւով է ընթանում: Եվ ես՝ որպես հոգեթերապեւտ, ով մարդու հոգին բժշկելու խնդիր ունի, առաջին հերթին կարեւորում եմ հիվանդության հոգեկան դրսեւորումները: Բոլոր զգացումները, զգացողությունները, որոնք ապրում են ոչ առողջ մարդու հոգում, իրենց հետքն են թողնում եւ ազդում են հիվանդության ընթացքի վրա: Հիվանդ մարդը չի կարող երջանիկ լինել: Բացի ֆիզիկական ցավից՝ հիվանդին ուղեկցում են հոգեկան տանջանքները՝ տխրությունը, հուսահատությունը, վախը, ընկճախտը, որոնց արդյունքում ավելի է վատանում առանց այդ էլ ծանր վիճակը:

Հոգու մասին խոսելիս՝ առաջին բանը, որ պետք է մեր ուշադրության կենտրոնում լինի, հավատն է: Յուրաքանչյուր հիվանդություն հոգեւորի, ոգեղենության պակասի մասին է ազդարարում: Առաջ անցնելով՝ պետք է նշեմ, որ ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով հիվանդները՝ գրեթե բոլորը, իրենց հիվանդությունը համարում են «Աստծո պատիժ»:

Մարդու առողջության գլխավոր առանցքը նրա իմուն համակարգն է: Բոլոր հիվանդությունները, վարակները ցածր իմունիտետի հետեւանք են: Վերջինս մարդու «ես»-ի արտացոլումն է, ինչը նշանակում է, որ նրա ներաշխարհը՝ իր բոլոր դրսեւորումներով, հուզումներով, ազդում է ոչ միայն հոգեկան, այլեւ ֆիզիկական առողջության վրա: Այստեղ մենք խոսում ենք հոգեմարմնական երեւույթի մասին, որը վերջին շրջանում ավելի հաճախ է սկսել գիտակցվել, քանզի բժշկությունը հանգել է այն կարծիքին, որ մարդուն պետք է դիտարկել մարմին-միտք-հոգի ամբողջության մեջ: Հոլիստիկ կոչվող այս մոտեցումը շատ կարեւոր է հիվանդի բուժման գործընթացում, քանի որ մարդը զուտ մարմին չէ. նրա հոգեկան վատ վիճակը մեծ ազդեցություն է ունենում վարակների արագ տարածման, օրգանիզմի, իմունիտետի թուլացման եւ հիվանդության այլ հետեւանքների վրա եւ հակառակը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր մարդիկ ունենում են չափազանց ծանր հոգեկան ապրումներ: Ի տարբերություն բարդ եւ անբուժելի համարվող այլ հիվանդությունների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հանդեպ հասարակության դիրքորոշումը յուրօրինակ է, եւ դա՝ հատկապես հայ իրականության մեջ: Եթե համեմատենք Եվրոպայի կամ ԱՄՆ-ի հետ, ապա մեզանում հասարակությունը դեռեւս պատրաստ չէ «հանգիստ» ընդունելու նման հիվանդներին: Այստեղ մենք առնչվում ենք «ՍՏԻԳՄԱ»-ի հետ: Վերջինս հայերեն թարգմանվում է որպես «խարան»: Հին աշխարհում կտրվածքի կամ այրելու միջոցով մարդու մարմնի վրա հետք էին թողնում. նշան, որն օգնում էր տարբերակել հանցագործներին, ստրուկներին կամ դավաճաններին: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ մարդիկ եւս պիտակավորվում են հասարակության կողմից, ինչը բերում է խտրականության: Վերջինիս հետ նման հիվանդներն առնչվում են թե՛ ընտանիքում, թե՛ աշխատավայրում, նույնիսկ՝ բժշկական հաստատություններում: Դա շատ լուրջ խնդիր է, որը չպետք է անուշադրության մատնվի, ինչին այսօր մենք ականատես ենք լինում, քանի որ հասարակության ոչ ճիշտ տեղեկացվածությունը (թե նման հիվանդների հետ շփումն անթույլատրելի է կամ վտանգավոր) եւ նմանատիպ այլ կարծրատիպեր լուրջ ազդեցություն են թողնում հիվանդների հոգեկան վիճակի վրա: Հասարակության մերժող վերաբերմունքի պատճառով հիվանդն սկսում է մեկուսանալ, ընկնում է ընկճախտի մեջ, առաջանում են մեղավորության, ամոթի զգացում եւ ատելություն՝ սեփական անձի նկատմամբ: Նման բացասական հույզերն արտացոլվում են նաեւ ֆիզիկական մակարդակում՝ վատ ինքնազգացողության տեսքով, ինչը բերում է արյան անալիզների վատացման եւ ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ին ուկեղցող հիվանդությունների առաջացման:

Հետաքրքրական է, որ մարդիկ, երբ իմանում են իրենց հիվանդության մասին, հանկարծ սկսում են խորհել: Խորհել կյանքի, կյանքի իմաստի շուրջ, եւ որ ամենակարեւորն է, սկսում են մտածել Աստծո մասին: ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր հիվանդների մտքում ծագում են տարբեր էքզիստենցիալ հարցեր, որոնց պատասխանը նրանք գտնում են միայն հոգեւոր դաշտում: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը սովորական հիվանդություն չէ. այստեղ մարդը պայքարի մեջ է դուրս գալիս մահվան հետ: Երբ նա կանգնում է մահվանը դեմ առ դեմ եւ գիտակցում, որ այլեւս իր ձեռքերում ոչինչ չկա, նա հիշում է, որ կա մեկը եւ միակը, ով կարող է իրեն օգնել. եւ դա Աստված է: Ասել, որ բոլորն անխտիր գալիս են այդ ճշմարտությանը, ճիշտ չէ, իհարկե, սակայն շատերը փորձում են գտնել իրենց հոգու խաղաղությունը հավատի մեջ: Կարող է հակասական թվալ, սակայն դրան զուգահեռ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդներն ունենում են բազմաթիվ հարցեր՝ Աստծո հետ կապված: Շատերը Նրան մեղադրում են իրենց հիվանդության մեջ, մյուսները նեղանում են՝ մտածելով, թե Աստված մոռացել եւ թողել է իրենց միայնակ՝ տառապանքի մեջ: Եվ չնայած բազմաթիվ հակասական զգացումների, միեւնույն է, մարդը հանգում է Աստծո գաղափարին, եւ երբ բոլոր պատասխաններն ստացված են, երբ մարդուն ուղղորդում ես ճիշտ ճանապարհով, նա գտնում է իր համար այդքան թանկ հանգստությունը:

Օտարազգի հեղինակները նշում են մի շատ հետաքրքրական փաստ. ՁԻԱՀ-ը պատճառ դարձավ, որ շատ մարդիկ ավելի վաղ տարիքում դեմ առ դեմ դուրս եկան սեփական բարոյական նորմերին եւ ձեռք բերեցին առավել խոր հոգեւոր արժեքներ (Psychiatric Aspects of HIV/AIDS, Francisco Fernandez, M.D. Pedro Ruiz, M.D.): Կարելի է ասել, որ հենց այս հիվանդությունը հիմք հանդիսացավ, որ դասական բժշկությունը, բացի ֆիզիոլոգիական խնդիրներից, սկսեց ուշադրություն դարձնել հիվանդի հոգեկան վիճակին՝ եւ հատկապես նշանավորելով հոգեւոր արժեքները: Հիվանդության ուսումնասիրությունը կրոնական եւ հոգեւոր մոտեցումների համատեքստում ցույց է տալիս, որ հավատը կարեւոր դեր է խաղում հիվանդի լավ ինքնազգացողության եւ ապաքինման մեջ (Psychiatric Aspects of HIV/AIDS, Francisco Fernandez, M.D. Pedro Ruiz, M.D.): Ամերիկյան բժշկական գիտահետազոտական հաստատություններից մեկը հոգեւոր ճգնաժամը ներկայացնում է որպես կյանքի սկզբունքների ընդհատում, երբ այն ներթափանցելով մարդու ներաշխարհ՝ ամբողջովին վերափոխում է անձի կենսաբանական եւ սոցիալ-հոգեբանական ասպեկտը:

Իրականացվել է բժշկագիտական փորձ, որի շրջանակներում տարբեր կրոնների ներկայացուցիչներ աղոթել են ՁԻԱՀ-ով վարակված 40 հիվանդի համար: Հոգեւոր ծառայողներն աղոթել են յուրաքանչյուր հիվանդի համար 6 ամիս շարունակ (օրական 1 ժամ, շաբաթական 6 օր): Ավարտին նկատվել է տպավորիչ արդյունք, որն էլ նպաստել է այս մոտեցման ավելի խոր ուսումնասիրությանը:

Մեկ այլ ուսումնասիրության շրջանակներում հարցում է արվել 29 միասեռական եւ հիվանդության տարբեր ծանրություն ունեցող ՄԻԱՎ վարակը կրող տղամարդկանց շրջանում՝ պարզելու համար այն գործոնները, որոնք օգնում են նրանց համակերպվել հիվանդության հետ եւ հասնել հոգեւոր հանգստության: Հարցվածները հիվանդությունը նկարագրում են որպես *ներքին խաղաղության պակաս, հոգեկան ցավ, վախ եւ մեկուսացվածության զգացում*: Սրա արդյունքում առավել կարեւորվեց բուժման ընթացքում շեշտ դնելը հիվանդության, դրա նշանների եւ հուսալքության ու ֆատալիզմի կապի ուսումնասիրության վրա: Ուսումնասիրության մեջ կարեւորվում է այն փաստը, որ խոսելով ինքնազգացողության մասին՝ հիվանդն առաջին հերթին նշում է իր հոգեկան վիճակը՝ իր լավ ինքնազգացողության հիմքը համարելով հոգեկան հանգստությունն ու ներքին բավարարվածությունը: Եվ նույնիսկ հիվանդության առավել խոր փուլում գտնվող հիվանդներն ավելի քիչ են կենտրոնանում ֆիզիկական նշանների վրա՝ առավել կարեւորելով իրենց հոգեկան վիճակն ու ապրումները:

*Շարունակությունը՝ էջ 5*

## Նոր տնօրինություն

• Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Արսեն քհն. Միրզոյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատանն ստանձնած պարտականություններից, ուսման է կոչվել Գերմանիայում:

• 2018 թվականին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ արտերկրի բարձրագույն կրթական հաստատություններ ուսումնառության են մեկնել Մայր Աթոռի կառույցներում ծառայող երեք եկեղեցական եւ մեկ աշխարհական:

***Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի***

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

# ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ

## «Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

*Սկիզբը՝ թիվ 23*

Գիտեմ, որ հիմա ինձ լսում եք նաեւ դուք՝ ուրիշներդ, եւ ինքներդ ձեզ մտածում. «Ե՞րբ է մեր հերթն էլ գալու: Գոնե մի քիչ մեր մասին էլ կխոսվի՞ այս հաղորդման ընթացքում, քանի որ մենք մեղավոր չենք, որ այսօր չենք կարող հայտնվել որեւէ տոնական սեղանի շուրջ»: Այո՛, հիմա քո մասին էլ կխոսեմ: Երեւի հիմա ասում ես. «Ես հիվանդ եմ, հիվանդանոցում պառկած, միացրել եմ կողքիս դրված ռադիոընդունիչը եւ քեզ եմ լսում, իսկ դու գոչում ես ու ասում, որ մեղքը մերն է, եւ եսասեր ենք»: Չէ՛, ասածներս քեզ չեն վերաբերում, դու, իհարկե, մեղավոր չես, որովհետեւ հիվանդ ես ու անօգնական եւ չես կարող որեւէ տեղ գնալ: Քեզ բոլորն էլ սիրում են, սակայն պարտադրաբար ես մենակ մնում: Առավոտյան ոմանք եկան՝ քեզ տեսակցության, բայց հիմա գնացել են՝ սեղան նստելու:

Գիտեմ, որ դու էլ մեղք չունես, քանի որ անդամալույծ ես: Ի՞նչ անես, մի՞թե մեղավոր ես, որ չես կարող վազել ու գնալ այնտեղ, ուր որ սիրտդ է ուզում: Սիրտդ վազել է ուզում, բայց մարմինդ չի օգնում նրան, չնայած որ Սուրբ Ծնունդ է:

Այո՛, դու էլ մեղավոր չես, որ մենակ ես ապրում, որովհետեւ ոչ մի բարեկամ չունես, որովհետեւ ծեր ես:

Դու էլ մեղք չունես, որ հիմա լաց ես լինում եւ չես կարող անցյալ տարիների պես նշել այս տոնը, որովհետեւ մեծ վիշտ ունես. այս տարի Սուրբ Ծննդին բացակա է տան անդամներից մեկը: Սա էլ շատ ծանր բան է:

Եթե, ուրեմն, ուզում եք, որ մի քիչ ընկերակցեմ ձեզ այսօր, լավ: Չեմ թաքցնում ձեզնից, որ ես էլ հաղորդման ավարտից հետո գնալու եմ տոնական ճաշկերույթի, բայց հիմա, քանի որ միացրել եք ռադիոն ու լսում եք, միասին անցկացնենք այս ժամանակը, խոսենք այն մարդկանց մասին, ովքեր այսօր՝ Սուրբ Ծննդին, միայնակ են ու տխուր, որովհետեւ հանգամանքներն են այդպես պարտադրում:

Նախ՝ ձեզ մի հուսադրող բան ասեմ. բոլոր մարդիկ տոների ժամանակ մի քիչ էլ թախծում են, ուրախությունը երբեք 100 տոկոս չի լինում: Երբեմն թախծի ալիքը պարուրում է մեզ մեր կյանքի ամենաերջանիկ պահերին: Հոգեբաններն էլ ասում են, որ գոյություն ունի տոնական օրերի թախիծ, երբ տխրում է մեր հոգին, եւ չենք կարողանում լիովին վայելել ուրախությունը:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

## Ռաֆայել Իսրայելյան —110

*Սկիզբը՝ թիվ 21–23*

Ընդհանրապես Իսրայելյանի հոդվածներում արծարծված քաղաքաշինությանն ու շինարվեստին վերաբերող հարցերը խիստ արդիական են նաեւ մեր օրերում: Դրանում կարող ենք համոզվել՝ ընթերցելով հատվածներ վարպետի գրած հոդվածներից: Օրինակ՝ «Ինքնատիպության պահպանման համար» հոդվածում («Գրական թերթ», 1967, 30 հունիսի) նա գրում է. «Ձգտումը՝ դրսից բերել լավը, առաջադեմը, լինի դա կառուցվածքի ներքին կյանքի կազմակերպման մեջ, կոնստրուկտիվ մասերի մեջ թե նոր շինանյութերի՝ միեւնույն է, այդ բոլորը լայն եւ համարձակ պետք է օգտագործել, ինչպես ժամանակին մեր վարպետներն են բերել, յուրացրել, բեկել եւ հետո հայերեն հնչեցրել: Նորը դրսից պետք է բերել ոչ թե նրան հնազանդվելով, այլ հպատակեցնելու, մեզ ծառայեցնելու համար: Բայց երբ Բրազիլ քաղաքից վերցնում ենք շենքը եւ անփոփոխ տեղադրում Երեւանում, դա մեզ ոչ միայն պատիվ չի բերում, այլեւ աղքատացնում եւ կաշկանդում է մեր ստեղծագործական միտքը: Օրինակներ չեմ բերում, նրանք, ցավոք, շատ են:

Եվ այսպիսով, մի գեղեցիկ, ավելի ճիշտ՝ տխուր օր, մենք կդառնանք օտար մեր իսկ հարազատ մայրաքաղաքում, որը իր «ժամանակակից» շենքերով կարող է կորցնել սեփական դեմքը: Ահավոր խոսքեր եմ ասում, որպեսզի մենք սթափվենք եւ լրջանանք: Վերջին տարիներին, կրկին ընդօրինակելով, մենք ընդունել ենք մեր քաղաքների շինարարության մեջ այսպես կոչված «ազատ կառուցապատման» մեթոդը: Սակայն, իմ կարծիքով, այստեղ էլ ընկնելով ձեւի հետեւից, մոռանում ենք նրա կիրառման հիմնական գաղափարը եւ անխտիր մեր բոլոր նորակառույցներում այն կիրառելով, ստանում ենք խայտաբղետ, դիմազուրկ, անսիստեմ շենքերի կուտակում եւ հայտարարում, որ սա ազատ կառուցապատում է:

Ընդունելով ազատ կառուցապատման սկզբունքը որպես միակը՝ մենք կատարում ենք խիստ անսկզբունք գործ: Ստացվում է այնպես, որ մենք այլեւս իրավունք չունենք ունենալ կանոնավոր կառուցապատված, ասենք գլխավոր փողոց կամ պողոտա. որովհետեւ, եթե շենքերը իրար զուգահեռ դրված լինեն այդ գլխավոր փողոցին համապատասխան, ապա դա ամենախիստ ձեւով խախտում է «ազատ կառուցապատման» սկզբունքը:

...Ցավալի կողմեր շատ ունենք: Ամենակարեւորը մեր ճարտարապետության ինքնատիպության պահպանման հարցն է:

Անկասկած, սա դժվարագույն հարցն է արդի ճարտարապետության մեջ, բայց հենց այդ դժվարահաղթ խնդիրն էլ պահանջում է ոչ թե նահանջել եւ անձնատուր լինել մոդային, այլ քրտնաջան աշխատել, պայքարել եւ ազնվորեն ձգտել այդ մեծ խնդրի լուծմանը»:

Ի պատասխան «Գարուն» ամսագրի (1971 թ., թիվ 1) աշխատակցի՝ արդի հայ քաղաքաշինության առանձնահատկություններին վերաբերող հարցի՝ վարպետն ասել է. «Այսօրվա մասին, ցավոք, քիչ դրական բան ունեմ ասելու: Եթե այժմ մեքենա նստենք ու փակենք մեր աչքերը, շրջենք Հայաստանի քաղաքներում ու ուզած տեղում բացենք աչքներս, միանգամից չենք կարող ասել, թե որտեղ ենք գտնվում: Ամեն ինչ Արթիկ-տուֆով, շարունակ Արթիկ-տուֆով, մինչդեռ պետք է խելացիորեն օգտագործել Հայաստանի այնքա՛ն հարուստ ու բազմազան շինանյութերը՝ հաշվի առնելով ե՛ւ բնակլիմայական, ե՛ւ աշխարհագրական պայմանները եւ նույնիսկ այդ բնակավայրերում ապրողների բնավորությունը: Մինչդեռ այս ուղղությամբ առ այսօր շատ քիչ բան է արվել: Նախկինում հայկական բնակավայրերը տարբերվել են իրարից:

Գյումրեցու տունը չէր հանդիպի Գորիսում, Աշտարակում, Կոնդում, Բայազետում... եւ ընդհակառակը: Այժմ Էջմիածինը աստիճանաբար վերածվում է Երեւանի արվարձանի, մինչդեռ կարող էր եւ պետք է, որ Էջմիածինը Էջմիածին մնար, Երեւանը՝ Երեւան:

Յուրաքանչյուր քաղաք իր ձեւն ու ոճը պետք է ունենա:

...Դուրս ես գալիս քաղաք (նկատի ունի Երեւանը – *Հ. Բ. (Ա.)*, շրջում ես եւ երբեք էլ չի թվում, որ Երեւանը կարող է 2750 տարեկան լինել: Ոչ մի վկա չկա, ոչ մի նշան: Եղածը ծածկել ենք ու դեռ շարունակում ենք ծածկել: Ֆրանսիացիները Փարիզ են կառուցում այսօր՝ աչքի տակ ունենալով էյֆելը, որն արհեստական մի շինություն է եւ կարող է նաեւ արհեստականորեն էլ մի օր դադարի իր դերը կատարելուց: Բայց մենք Արարատ ունենք, որը նույնպես քողարկում ենք



առանց զգալու, առանց հաշիվ տալու: Բնության այս պարգեւից օգտվելու փոխարեն մենք այն արհեստականորեն հեռացնում ենք մեր մայրաքաղաքից: Արարատը դիտելու համար զբոսաշրջիկներին այժմ մագլցել ենք տալիս զանազան բարձունքներ...»:

«Գարուն» ամսագրին տված հարցազրույցում վարպետը նաեւ ասել է. «Մեր քաղաքների դեմքը բնակելի տներն են, եւ որքան նրանք լավը լինեն, այնքան մնայուն ու խոսուն կլինեն մեր քաղաքները: Չնայած դրան, հասարակական շենքերն են, որ մնում են ու փոխանցվում սերունդներին: Այստեղ է, որ չափազանց բծախնդիր պետք է լինել: Այս շենքերն են, որ գաղափարախոսություն, ճաշակ ու կայուն միտք են արտահայտում: Դրանով է որոշվում նաեւ տվյալ ժամանակի հասարակության ճաշակը: Արվեստագետն այստեղ զգայուն պիտի լինի եւ զգույշ: Այստեղ է, որ ազգայինը պետք է հնչեցվի ամբողջ ուժով»:

Իսրայելյանը կամարի հայտնագործումը համարում էր անիվի ստեղծմանը համազոր երեւույթ: Զայրանում էր, երբ շենքերի վրայից վերացնում էին կամարները:

Մեծ արվեստագետը շատ էր հետաքրքրվում Գառնու հոյակերտ տաճարի վերականգնմամբ: Այն ժամանակ տաճարը վերականգնել-չվերականգնելու խնդիրը վիճահարույց էր: Ճարտարապետը միանշանակորեն ճշմարիտ էր համարում հուշարձանի վերականգնելը, ըստ նրա. *«Ճարտարապետական բեկորը այն է ցույց տալիս միայն, թե քարի մշակման ինչ բարձր արվեստի էին հասել մեր նախնիներն այն ժամանակ: Դետալն իր տեղումն է դառնում ճարտարապետություն: Հուշարձանի վերականգնումը իր սկզբնական տեսքով գաղափար կտա այն ժամանակվա ճարտարապետական մտածողության մասին»:* Իսրայելյանը մասնակցել է վերականգնման նախագծի քննարկումներին, հաճախ գնացել Գառնի՝ տեսնելու, թե գործն ինչպես է առաջ գնում:

Խոսելով ճարտարապետության՝ մարդու հոգեբանության ու դաստիարակության գործում ունեցած դերի մասին՝ վարպետն ասել է. *«Լավ հուշարձանը, լավ շենքը, եթե կարողանում է ազդել մարդու ներաշխարհի վրա, ուրեմն ծառայում է իր նպատակին եւ արդարացնում է իր գոյությունը»:*

Իսրայելյանն այսպես է բնորոշել հայկական ճարտարապետությունը. «Մեր ճարտարապետությունը հստակ, պայծառ մտքի արդյունք է, տղամարդու նման խոսքը ճակատին ասող ճարտարապետություն»:

Սակայն միայն քաղաքաշինական խնդիրները չէին, որ մեծապես անհանգստացնում էին նվիրյալ արվեստագետին, նրան մտահոգում էին նաեւ բնապահպանական խնդիրները: Այս ոլորտի թերացումները եւս շատ ծանր էր տանում: Ամեն անգամ հիանալով Սեւանի գեղեցկությամբ՝ չէր կարողանում թախիծ չապրել լճի ջրի մակարդակի իջեցման համար եւ չարտահայտվել այդ տխուր իրողության մասին: Յուրաքանչյուր ջրամբարի կառուցման ժամանակ վարպետը հույս էր հայտնում, որ վերջինիս շնորհիվ կնվազի Սեւանից դուրս եկող ջրի քանակը, եւ Գեղամա կապուտաչ ծովակը կհասնի նախկին չափերին:

«Ռաֆայել Իսրայելյանը հետաքրքրվում էր տառացիորեն այն ամենով, ինչ կապված էր հայրենի Հայաստանի հետ, ինչ կատարվում էր հանրապետության կյանքում՝ իրեն անմիջականորեն վերաբերեր թե ոչ: Այստեղ արտահայտվում էր ժողովրդի, երկրի նկատմամբ նրա սերը՝ ոչ թե վերացական, այլ տանտիրոջ նախանձախնդիր սերը: Սա հիմնականն էր նրա հատկանիշներից, ու թերեւս հենց դա կանխորոշեց ժողովրդական ճարտարապետի բարձր կոչումը, որ նա կրում էր հպարտությամբ ու արժանապատվորեն: Նրան ճանաչում էին ամենքը, մտերմորեն Ռաֆո էին ասում՝ փողոցում, տանը, ուր էլ գնար, որտեղ էլ լիներ»,– գրել է Յուրի Յարալովը:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՁԻԱՀ՝ դատավճիռ, թե՞...

*Սկիզբը՝ էջ 4*

Գործնականում կան շատ դեպքեր, որբ հոգեւոր կյանքի վերահմաստավորումն օգնել է հիվանդին հասնել ինքնաճանաչմանը, հիվանդության ընդունմանն ու առողջացմանը:

Զրուցելով ՁԻԱՀ-ից ու քաղցկեղից տառապող 15 հիվանդի հետ՝ ամերիկացի հետազոտողների համար պարզ դարձավ, որ հոգեւորի եւ հոգեկան աշխարհի դերն այս մարդկանց կյանքում անչափ կարեւոր է: Առանցքային գործոններից մեկը հավատն է առավել բարձր ուժի նկատմամբ, որը վեր է մարդկային գիտակցումից: Հիվանդներից ոմանք գտել են ուժ, խաղաղություն եւ պաշտպանություն իրենց Եկեղեցում: Ոմանք էլ, ընդհակառակը, մերժված լինելով իրենց Եկեղեցու կողմից, որը չի ընդունում նրանց ապրելակերպը, կամ էլ ունենալով կրոնական համայնքի հետ շփման բացասական փորձ, լցվել են ատելությամբ:

Այստեղ տեղին է հիշեցնել, որ Հայ Առաքելական Եկեղեցին, ուղղորդվելով Քրիստոսի՝ անբուժելի բորոտությունը բուժելու օրինակով, գթությամբ եւ ողորմածությամբ այսօր օգնում է ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց: Եկեղեցուն կից գործում են վերականգնողական կենտրոններ, որոնք աջակցում են նման հիվանդներին:

Ստորեւ ցանկանում ենք ներկայացնել մի դեպք, երբ հիվանդը, 15 տարի շարունակ լինելով ՄԻԱՎ վարակակիր, խոսում է իր հիվանդության մասին:

*«Ամեն ինչ սկսվում է մտքից, իսկ միտքը մղում է գործողության, ստեղծում է իրականություն: Եվ ես կարող եմ կառավարել իմ միտքը, քանի այն չի հասել իմ ֆիզիկական եւ հուզական վիճակին»*,– ասում է Շերի Կապլանը:

*Շարունակելի*

**Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**Բժշկական գիտ. թեկնածու,**
**հոգեթերապեւտ, նարեկաբույժ**

# Առաքելական Ա եւ Բ կանոնախմբերը եւ նրանց համեմատական վերլուծությունը



Հայ ժողովրդի բազմադարյան պատմության տարբեր ժամանակաշրջաններից մեզ հասել է մշակութային ընտիր ժառանգություն՝ գրականության, աստվածաբանության, պատմագրության եւ ընդհանրապես գիտության տարբեր ճյուղերին վերաբերող եւ ինքնուրույն, եւ թարգմանական երկեր: Միջնադարյան հայ մատենագրության մեջ պահպանվել են նաեւ ժամանակի հասարակական տարբեր շերտերի սոցիալական եւ իրավական հարաբերություններն արտացոլող հուշարձաններ: Հարկ է նաեւ նշել, որ միջնադարում հայ ժողովրդի գաղափարախոսության բազում բնագավառներում առավելապես իշխում էին Հայ Եկեղեցու վարդապետական հայացքները:

Տարբեր եկեղեցական ժողովների (տեղական, տիեզերական), ինչպես նաեւ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների ընդունած կանոնները հիմնականում տեղ են գտնում «Կանոնագիրք Հայոց» անունը կրող ուշագրավ ժողովածուի մեջ, որը կազմել է Հովհան Օձնեցի (717–728) կաթողիկոսը: «Կանոնագիրք Հայոց»-ի ուսումնասիրության պարագայում անուրանալի է Վազգեն Հակոբյանի կատարած աշխատանքը, որը 2 հատորով հրատարակեց «Կանոնագիրք Հայոց»-ը՝ օժտելով դրանք խորագնին ուսումնասիրություններով: Առաջին հատորը հրատարակվել է 1964, իսկ երկրորդը՝ 1971 թվականին: Ժողովածուի առաջին հատորում հեղինակի գրած բավականին ծավալուն նախաբանին հաջորդում են Ա եւ Բ առաքելական կանոնախմբերը, որոնց ուսումնասիրությանն ու վերլուծությանն է նվիրված մեր սույն աշխատանքը: Առաքելական Ա կանոնախումբն ունի հետեւյալ վերնագիրը. «Սահմանք եւ կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ տեառն»: Կանոնախումբն սկսվում է նախաբանով, որտեղ մասնավորաբար խոսվում է Ձիթենյաց լեռան վրայից Քրիստոսի համբարձման, դրանից 10 օր անց տեղի ունեցած Հոգեգալստի՝ Պենտեկոստեի մասին: Եվ երբ առաքյալները միաբան էին, Սուրբ Հոգուց ստացած շնորհով կարգել են այդ կանոնները: Կանոնախումբը բաղկացած է ԼԴ (34) կանոնից: Մինչեւ կանոնների առանձնական վերլուծությանն անցնելը պետք է նշել, որ դրանք արտացոլում են այնպիսի խնդիրներ, որոնք անհրաժեշտ էին նոր ստեղծված քրիստոնեական վարդապետությունն ամրապնդելու եւ քրիստոնյաների հոգեւոր կյանքն ու գործունեությունը կարգավորելու համար: Օրինակ՝ կանոնախմբի Ա կանոնը *(«Կանոնագիրք Հայոց», հատոր Ա՝ աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ 27–28)* սովորեցնում է աղոթելիս արեւելյան կողմում կանգնել: Իսկ կանոնի բացատրության մեջ նշվում է, որ ինչպես փայլակն է (արեւը) փայլատակում արեւելքից եւ երեւում է մինչեւ արեւմուտք, նույնպես եւ պետք է լինի Մարդու Որդու գալուստը: Քանի որ Քրիստոսը՝ արդարության արեգակը, Աստծո Որդին, նույնպես ծագեց արեւելքից եւ կատարեց մարդկանց փրկությունը: Եվ հենց այս պատճառով էլ պետք է աղոթելիս արեւելյան կողմում կանգնել: Նշենք մի շատ կարեւոր առանձնահատկություն. առաքելական Ա կանոնախմբի բոլոր 34 կանոններն սկսվում են, այսպես կոչված, ներածական հատվածով, որտեղ ասված է. «Կարգեցին առաքյալները եւ հաստատությամբ դրեցին»՝ սրանով եւս մեկ անգամ ցույց տալով կանոնների առաքելական ծագումը: Բ–Ե կանոնները *(տե՛ս նույն տեղում, էջ 29–32)* իրենց բնույթով ծիսական են եւ համապատասխանաբար վերաբերում են կիրակի օրը պատարագ մատուցելուն, չորեքշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերը պահելուն: Կիրակի օրը պատարագ կատարելու խնդրի շուրջ Քրիստոսի առաքյալները կարգում են, որ պետք է պատվել ամեն կիրակի (գրաբարով՝ միաշաբաթ)՝ որպես մեր Կենարարի տերունական մարմնի եւ Տիրոջ արյան հիշատակի օր: Նաեւ սահմանվում է, որ ամեն պատարագի ժամանակ պետք է կարդալ մարգարեական գրքերը, ինչպես նաեւ՝ Ավետարանները: Չորեքշաբթի օրվա վերաբերյալ ասվում է, որ այդ օրը պետք է պատվել եւ պահել՝ իբրեւ Քրիստոսի մատնության, չարչարանքների, իսկ ուրբաթ օրը՝ որպես սգո օր: Ուրբաթ օրը պետք է նաեւ պահք պահել մինչեւ ինոներորդ ժամը: Շաբաթ օրը սահմանվում է բոլոր մարտիրոսների՝ վկաների, նահատակների, ինչպես նաեւ սրբերի հիշատակության օր: Զ կանոնը *(տե՛ս նույն տեղում)* վերաբերում է կիսասարկավագների, սարկավագների եւ երեցների ձեռնադրության հարցին: Այստեղ պետք է հատկանշել այն փաստը, որ մենք հստակորեն առնչվում ենք նվիրապետական կարգի ձեւավորման խնդրին: Կիսասարկավագները, սարկավագները եւ երեցները ղեւտացիների գործունեության կրողն են: Հիշեցնենք, որ Հին Կտակարանում հայտնի ղեւտացիները հոգեւորականներն էին, եւ միայն նրանց էր վերապահված Աստծուն ծառայելը, զոհաբերություն կատարելը:

Հաջորդ՝ է կանոնը *(տե՛ս նույն տեղում, էջ 32)* վերաբերում է խիստ կարեւոր խնդիրներից մեկին՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Հայտնության օրը միասնաբար հունվարի 6-ին տոնելուն: Սակայն Անանիա Շիրակացու «Հայտնության ճառում» կարդում ենք մի տեղեկություն, որի համաձայն՝ Սահակի եւ Մաշտոցի մահից հետո եկած կաթողիկոսները, անգետ լինելով ճշմարտությանը՝ Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը (Հայտնությունը) միասնաբար հունվարի 6-ին կատարելու կարգին, խաթարել են հայոց տոնացույցը: Այն վերականգնել է Հովհան Մանդակունի (478–490) կաթողիկոսը: Նույն ճառում Շիրակացին մանրամասն ներկայացնում է, թե ինչու է պետք Քրիստոսի Ծնունդն ու Հայտնությունը տոնել միասնաբար հունվարի 6-ին: Մենք այստեղ մանրամասնությամբ չենք անդրադառնա այդ հարցին, որովհետեւ այն ամբողջությամբ մի ուրիշ ուսումնասիրության թեմա է: Հաջորդիվ կփորձենք ներկայացնել կանոններում առկա առանցքային խնդիրները: Ը կանոնում *(տե՛ս նույն տեղում, էջ 32–33)* խոսվում է քառասնորդաց պահքի մասին, որը պետք է պահել Զատկից առաջ: Խոսքը, իհարկե, Մեծ պահքի մասին է: Մասնավորապես ասվում է, որ կարգեցին առաքյալներն ու հաստատությամբ դրեցին, որ 40 օր պահք պահեն (հավատացյալ ժողովուրդը) ու մաքրվեն ամենայն չարությունից, մեղքերից ու կերակուրներից մեր Փրկչի չարչարանքների օրից առաջ: Եվ նաեւ կարգեցին, որ այդ օրերին պետք է կարդալ մարգարեական գրքերը, առաքյալների գրքերը, որոնք պատմում են Տիրոջ չարչարանքների մասին եւ Փրկչի հարության վերաբերյալ գուշակություններ են:

Անչափ հետաքրքրական է ԺԳ կանոնը *(տե՛ս նույն տեղում, էջ 35)*, որը վերաբերում է մանուկների մկրտության խնդրին եւ սահմանում, որ պետք է այն կատարել ութերորդ օրը: Ութերորդ օրը մկրտություն կատարելը կապվում եւ համեմատվում է Հին Կտակարանում հայտնի թլփատության երեւույթի հետ, որը կատարվում էր բոլոր արու զավակների հետ կրկին ութերորդ օրը, ինչպես որ Աստված պատվիրել էր Աբրահամին:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր

## Ռաֆայել Իսրայելյան —110

*Սկիզբը՝ էջ 5*

Մասնագիտական հետաքրքրություններից զատ՝ Իսրայելյանն այլ հետաքրքրություններ էլ ուներ. մշտապես ուսումնասիրում էր ժողովրդական բանահյուսությունը, հնագիտությունը, միջնադարյան եւ ժամանակակից գրականությունն ու արվեստը: Եվ պետք է ասել, որ ուրիշ բնագավառներում էլ տաղանդավոր էր. «Տաղանդավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում» հայտնի խոսքի զորեղ հիմնավորումներից էր նա: Բերենք մեկ օրինակ Ռուբեն Զարյանի «Հուշապատում» գրքից: 1951 թ. լույս է տեսնում Արամ Ղանալանյանի «Հայկական առածանի» գիրքը: Իսրայելյանը Զարյանի մոտ հիացմունքով է խոսում գրքի մասին եւ այն արժեւորող մի երկու հետաքրքիր միտք հայտնում: Զարյանի առաջարկով Իսրայելյանը «Հայկական առածանիի» մասին հոդված է գրում՝ «Արժեքավոր աշխատություն» վերնագրով: «Կարդաց,– գրում է Զարյանը:– Լավ էր գրված: Զարմանալի էր, գոնե ինձ համար, որ գրելու փորձ չունեցողը կարող էր այդպես շարադրել իր մտքերը: Մինչ այդ, եթե չեմ սխալվում, մի հոդվածի հեղինակ էր ընդամենը: Ասացի, թե այնքան լավ է գրված, որ ոչ իմ, ոչ էլ մի ուրիշի միջամտության կարիքը չունի:

Հոդվածը տպագրվեց «Գրական թերթում» եւ լավ տպավորություն թողեց: Ռաֆոն ոգեւորվեց եւ սկսեց գրել, գրել իրար հետեւից»:

Այս գրախոսությունից հետո Իսրայելյանը գրում է բազմաթիվ հոդվածներ՝ ճարտարապետության ու մշակույթի տարբեր հարցերի վերաբերող, եւ տեսական աշխատություններ, գրախոսում այլ հեղինակների արժեքավոր ուսումնասիրություններ եւ գրքեր՝ արվեստի, բանահյուսության, երաժշտության ու պարարվեստի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ Իսրայելյանի թողած գրական եւ հրապարակախոսական ժառանգությունը կազմում է մի քանի տասնյակ բովանդակալից ու մեծարժեք հոդվածներ, գրախոսություններ, աշխատություններ եւ գրքեր:

Ռաֆայել Իսրայելյանը մեծ հայրենասեր ու ազգասեր էր, ավելի ճիշտ՝ հայրենապաշտ ու ազգապաշտ: Նրա հայրենապաշտության ու ազգապաշտության ամենավառ դրսեւորումները, բնականաբար, առաջին հերթին իր աշխատանքներն են՝ հատկապես Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը եւ թանգարանի շենքը, «Վերածնունդ» հուշահամալիրը՝ նվիրված Բաշ-Ապարանի հերոսամարտին, Մուսա լեռան հերոսամարտի հուշարձանը, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված առաջին հուշարձանները Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բակում եւ Երեւանի Գաջագործների փողոցում, Մասիսի տաճարը (Չարենցի կամար) եւ առհասարակ բոլոր գործերը, ընդ որում՝ ոչ միայն շինությունները. հայրենապաշտությունն ու ազգապաշտությունը ճառագում են նրա յուրաքանչյուր ստեղծագործությունից, նրա ամեն մի աշխատանք շնչում եւ արտաշնչում է հայրենապաշտություն ու ազգապաշտություն, նրա ամեն մի աշխատանք հայրենապաշտության ու ազգապաշտության քարոզ է, սիրո, պաշտամունքի խոստովանություն առ իր հայրենիքն ու ազգը:

*Շարունակելի*

**Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)**
**Բանասիրական գիտ. թեկնածու**

# ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ

*Սկիզբը՝ էջ 4*

Մինչ ապրում ենք այս երկրի վրա, ուրախությունը միշտ խառնված կլինի տխրության հետ. եւ կուրախանանք, եւ կտխրենք:

Ուրեմն՝ միայն դուք չեք, մի՛ մեծացրեք ձեր վիշտը, մի՛ նախանձեք ուրիշներին՝ կարծելով, որ բոլորը երջանիկ են այսօր, եւ միայն դուք եք տանջվում: Այդպես չէ: Փորձեք լավ մտքերով պարուրել ձեզ: Հայր Պահիսիոսը *(սուրբ Պահիսիոս Սվյատոգորեց կամ՝ Աֆոնացի – Հույն Ուղղափառ Եկեղեցու ճգնակյաց վանական)* այդպես է ասում. «Պարուրեք ձեզ լավ մտքերով»: Մտածի՛ր դրական բաների մասին, այսինքն՝ ինչպես որ Աստված է ուզում: Նայի՛ր կյանքի երեւույթներին լավ աչքով, տես բաժակի լի մասը, ոչ՝ դատարկ: Կյանքի դրական կողմերը... Մտածի՛ր այն լավի մասին, որ ունես: Մի օր մի երեխա ինձ ասաց. «Ես անդամալույծ եմ, ամբողջ մարմինս անշարժ է, բայց այս վերջերս կարողանում եմ շարժել գլուխս եւ այնքա՛ն երջանիկ եմ»: Ուրեմն՝ միայն ողբալի կողմերդ մի՛ տես, թշվառ մի՛ զգա քեզ, որովհետեւ տխրությունը՝ տխրության վրա, քեզ ավելի ու ավելի ներքեւ է տանում:

Դրա համար էլ փորձի՛ր որեւէ լավ բան գտնել քո կյանքում: «Բայց ոչ մի լավ բան չկա, ինչպե՞ս գտնեմ»: Դա էլ մի դրական բան է, երբ ոչ մի դրական բան չունես քո կյանքում, քանի որ այդ դեպքում ամբողջ հույսդ Աստծու վրա ես դնում: Մտածի՛ր դրականորեն ու ասա՛. «Ես, Տե՛ր, հույսս կդնեմ Քեզ վրա, միայն Քեզ վրա, քանի որ ոչ մի լավ բան չկա իմ կյանքում» (չնայած վստահ եմ, որ կա): Եվ հիշի՛ր, որ Աստված այսօր թույլ է տվել, որ մենակ մնաս՝ ինչ-որ լավ նպատակով: Հավա՛տ ունեցիր Աստծու նկատմամբ: Աստված է, չէ՞, գիտի՝ ինչ է անում: Մի՞թե իմաստուն չէ, մի՞թե քեզ չի սիրում, մի՞թե Նա՛ չի կարգավորում ողջ աշխարհի կյանքը, մի՞թե Նա՛ չի որոշում՝ երբ դուրս գա արեւը եւ երբ մայր մտնի, մի՞թե Նրա կամքով չեն թռչունները թռչում երկնքում, եւ տերեւները՝ թափվում, Նրա, Ում համար նույնիսկ մեր գլխի մազերը հաշվված են: Մի՞թե Նա չգիտի ամեն ինչ: Էհ, ուրեմն գիտեր մեր Քրիստոսը, որ այս տարի Սուրբ Ծննդին դու, նա, մյուսը (միայն դու չես, քեզ պես շատ ուրիշներն էլ կան) միայնակ եք լինելու: Դա էլ Աստծու սիրո լույսի մեջ տես: Այդպես է ուզել Աստված՝ ասելով. «Զավա՛կս, ես, որ Աստված եմ եւ գիտեմ այն ամենը, ինչ որ լավ ու ճիշտ է քեզ համար, թույլ եմ տվել, որ այսօր այսպես անցկացնես օրդ»: Դա չի նշանակում, որ Աստված ուրախանում է քո տառապանքով, սակայն թույլ է տալիս, որ դա լինի՝ ինչ-որ լավ նպատակով: Նայի՛ր կյանքիդ երեւույթներին՝ հավատով լի Քրիստոսի նկատմամբ: «Ամեն ինչ բարուն է ծառայում նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն» *(Հռոմ. Ը 28)*: Սիրո՞ւմ ես Աստծուն. ուրեմն այդ մենակությունդ, տխրությունդ, արցունքներդ էլ դրական արդյունք կունենան քո կյանքում: Այսպիսով՝ հավա՛տ ունեցիր եւ փորձի՛ր օգուտ քաղել քո ներկա իրավի՛ճակից, մի լավ բա՛ն գտիր քո կյանքում, դառնությունից քաղցրությո՛ւն հանիր հոգուդ համար: Եթե ուզում ես, կարող ես այսօր ավելի ամուր միանալ Քրիստոսին, մի քիչ Նրան նմանվել, մտնել Նրա մենակության մեջ, քանի որ Նա էլ ծնվեց ու մենակ ապրեց այս աշխարհում. աշխարհը Նրան ուրախությամբ չընդունեց: Հիմա շատ մեծ ենք նշում Քրիստոսի ծնունդը, զարդարում ճանապարհները, ուրախանում, ցնծում, սակայն երբ ծնվեց Քրիստոսը, մենակ էր ողջ աշխարհում: Միայն Տիրամայրն էր տաքացնում Նրան իր սիրով ու ջերմ համբույրներով, հրեշտակներն էին օրհներգում Նրան, մի քանի հովիվ ու մոգ այցելության գալիս... Բայց դա էլ անցավ, ու մնաց մենակ: Իր արարածները, որոնց համար աշխարհ էր եկել, Նրան չընդունեցին: Հապա մտածի՛ր, դու էլ այսօր մի քիչ Քրիստոսին ես նմանվում. խոնարհեցնում ես անձդ Նրա պես, մենակ լինում, ինչպես Նա էր մենակ:

Այո՛, եթե ուզում ես, կարող ես այսօր ավելի ամուր միանալ Տիրոջը եւ ասել. «Տե՛ր, հասկացի՛ր ինձ, ինչպես որ Դու սեր էիր սպասում, բայց չստացար, ես էլ այսօր մի քիչ սեր էի սպասում, բայց մենակ եմ մնացել, դուրս մղվել հասարակությունից»: Դո՞ւրս ես մղվել, ուրեմն՝ սկսում ես նմանվել Քրիստոսին: Համբերի՛ր մի քիչ: Սովորենք՝ ինչ է նշանակում համբերություն: Այս օրն էլ կանցնի, վաղն էլ, կանցնեն մեր կյանքի բոլոր օրերը, կանցնի մեր կյանքը մեկ օրվա պես... Սովորի՛ր սպասել եւ կհասկանաս՝ ինչու էիր այսօր մենակ:

*Շարունակելի*

**Թարգմանությունը հունարենից՝**
**Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ**

# Հրատարակվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2018 թ. լույս է ընծայել 36 անուն գիրք, որոնց թվում.

-Սարգիս Քեհեյանի **«Բարոյագիտություն»** աշխատությունը:

Գիրքը փիլիսոփայական ակնարկներով համառոտ ներկայացնում է բարոյագիտական մտքի համապատկերը: Երկն ունի հանրագիտարանային բնույթ, որի շնորհիվ ընթերցողը կարող է ընդհանուր պատկերացում կազմել բարոյագիտական մտքի զարգացման հիմնական փուլերի, նշանավոր բարոյագետների ուսմունքների, բարոյագիտական տեսությունների, բարոյագիտության ոլորտների ու հիմնավորումների եւ բարոյագիտական հիմնական հասկացությունների մասին:

– Զգոն ծ. վրդ. Տեր-Հակոբյանի **«Սեր եւ ամուսնություն»** աշխատությունը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի «Սերմնացան» մատենաշարի շրջանակներում:







Երկը գրաբարից արեւելահայերենի է փոխադրել ճեմարանի Գ լսարանի սան Գեւորգ դպիր Կարապետյանը:

Գրքույկի նպատակն է ամուսնության պատրաստվող մարդկանց անհրաժեշտ գիտելիքներ տալ ս. Պսակի խորհրդի եւ դրա կարեւորության մասին: Այն բազմաթիվ պատասխաններ է տալիս ընտանիքում առաջացող խնդիրների վերաբերյալ, ուղիներ մատնանշում ընտանեկան կյանքի առավել ամրապնդման համար:

–19-րդ դարի Մայր Աթոռի միաբան Վահան ծ. վրդ. Բաստամյանցի **«Տարեգրություն: Ս. Էջմիածին. 1872–1880 թթ.»** հուշագրությունը՝ աշխատասիրությամբ պ. գ. դ. Գեւորգ Տեր-Վարդանյանի:

«Տարեգրության» սկզբի մասը հեղինակի կյանքի՝ հոգեւորական դառնալու նախորդած շրջանի (1842–1872 թթ.) համառոտ պատմությունը կամ իր կենսագրականն է: Բուն «Տարեգրությունը» օրագրության ձեւով ներկայացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու 1872–1880 թթ. պատմությունը: Գործի մեջ, ըստ հեղինակի, ամփոփված են նշանավոր իրադարձություններ Ս. Գայանե վանքի, Մայր Աթոռի եւ ազգային կյանքից: Արժեքավոր են նաեւ ժամանակի հայտնի եկեղեցականների բնորոշում-դիմանկարները:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Առաքելական Ա եւ Բ կանոնախմբերը եւ նրանց համեմատական վերլուծությունը

*Սկիզբը՝ էջ 6*

Եվ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մկրտությունը օրինակ պիտի ծառայեր բոլոր քրիստոնյաների համար: Եվ, իհարկե, մկրտության խորհուրդը առաջնապայմանը հանդիսացավ ադամական մեղքից ազատվելու եւ քրիստոնյա հոտի անդամը դառնալու համար: Մեր քննարկելիք «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում բազմաթիվ կանոններ կան մկրտության խորհրդի վերաբերյալ, որի մասին կխոսենք մեր հետագա աշխատանքներում: ԺԵ կանոնը *(տես նույն տեղում, էջ 37)* վերաբերում է այն մարդկանց, որոնք սուտ են երդվում, գնում են կախարդների կամ հարցուկների մոտ, հավատում են աստղագիտությանը (այստեղ՝ աստղագուշակությանը). այդպիսի մարդիկ անաստված մարդիկ են, եւ եթե նրանք քահանա են, պիտի զրկվեն քահանայական պաշտոնից, իսկ եթե հավատացյալ ժողովրդից մեկն է այդպիսի բան արել, պետք է հեռացվի եկեղեցուց: «Կանոնագիրք Հայոց»-ում կան շատ կանոններ, որոնք վերաբերում են վաշխառությանը: Դա եւս մի առանձին ուսումնասիրության թեմա է, բայց այստեղ կարեւորում ենք նշել, որ առաքելական Ա կանոնախմբի ԺԸ կանոնը *(տես նույն տեղում, էջ 39)* վերաբերում է հենց նույնանման հարցի, որտեղ մասնավորաբար ասվում է, որ եթե ինչ-որ մեկը վաշխ կամ տոկոս է առնում եւ ձգտում է շահի եւ ագահության, այդպիսին պիտի հավատացյալ չհամարվի: Եվ ամենակարեւորն այն է, որ այդպիսի մարդկանց չի կարելի ձեռնադրել եւ քահանայական պաշտոն տալ: Ի, ԻԱ եւ ԻԲ կանոնները *(տես նույն տեղում, էջ 40–42)* խոսում են այն հարցի մասին, որ չի կարելի ձեռնադրել անարգ, ընչասեր ու ամբարտավան մարդկանց: Մասնավորաբար ասվում է, որ բոլոր ձեռնադրվողները պետք է անարատ, ընտրյալ լինեն, եկեղեցու կարգում եւ օրենքներում հմուտ, եւ եթե մեկն անարգ գտնվի, պիտի հեռացվի քահանայությունից: Առաքյալները նաեւ կարգեցին եւ հաստատությամբ դրեցին, որ ընտրյալ մարդիկ չպետք է ընկնեն արծաթի ու շահի ետեւից, նրանց գործը պետք է լինի ժողովրդին եւ Աստծուն ծառայելը, պիտի միջնորդ հանդիսանան մարդկանց եւ Աստծու միջեւ: Եվ նրանք պետք է մեղք չգործեն եւ մաքուր լինեն: Կանոն ԻԲ-ում սահմանվում է, որ ամբարտավան, հպարտ, սնափառ, արբեցող, ուսումնատյաց, նախանձ, ցոփ ու շվայտ կյանք վարող, հանդուգն, անգութ եւ ոխակալ որեւէ մեկն իրավունք չունի մոտենալու քահանայական պաշտոնին: Հստակորեն նկատելի է, թե ինչ մեծ կարեւորություն է ունեցել եւ այսօր էլ ունի հոգեւորականությունը մեր՝ քրիստոնյաներիս կյանքում: Եվ ամեն ոք չէ, որ կարող է իր անձը նվիրել Աստծուն՝ ծառայելով որպես հոգեւորական: Եվ միայն այս կանոնախմբում չէ, որ խոսվում է այս մասին: Գրեթե բոլոր կանոնախմբերում կկարդանք հոգեւորականի դերի եւ առաքելության կարեւորության մասին կանոններ: Այդ կանոնները նպատակ ունեին տվյալ ժամանակներում կարգավորելու հոգեւորական-հավատացյալ հարաբերությունները եւ կապը: ԻԹ կանոնը *(տես նույն տեղում, էջ 45–46)* շատ հետաքրքրական է, եւ այն վերաբերում է Դավթի սաղմոսները կարդալուն եւ պաշտելուն: Առաքյալները հաստատությամբ կարգեցին, որ եկեղեցում ծիսակատարություն կատարելիս պետք է ասվեն Դավթի սաղմոսներն ու օրհնությունները (դրանք 150-ն են), պետք է ասել ամեն օր, ամեն ժամ, ինչպես եւ սաղմոսում է ասվում. «Օրհնեց Տերը ամենայն ժամ, ամենայն ժամ Նրա օրհնությունները իմ բերանում են» (Սաղմ., ԼԳ 2): Լ կանոնը *(տես նույն տեղում)* կարգադրում է չկարդալ արտաքին գրվածքները (Արտաքին գրեանք), որոնք փիլիսոփայական գրվածքներ են, օրինակ՝ Պլատոնի, Արիստոտելի եւ այլոց գործերը: Դրա փոխարեն եկեղեցում պետք է ընթերցել Հին Կտակարանը՝ Օրենքն ու մարգարեների գրվածքները, ինչպես նաեւ Նոր Կտակարանը, որտեղ գրված է մեր կենարար Փրկչի՝ Քրիստոսի չարչարանքների մասին:

Շարունակելի

**Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ**

# Հրատարակվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում




*Սկիզբը՝ էջ 7*

– «Արարատ» ամսագրի ժառանգությունն ընդգրկող **Քարոզգրքի Բ հատորը՝** նվիրված «Արարատի» հրատարակման 150-ամյակին:

Սույն գիրքը 1868–1919 թթ. Մայր Աթոռի պաշտոնական պարբերական հանդիսացող «Արարատ» ամսագրում հրատարակված թարգմանական քարոզների համահավաք ժողովածուն է:

– Հակոբ քհն. Սառիկյանի հուշերը՝ **«Ութ ամիս մեծ պատերազմի արեւմտյան ռազմավայրերում»** խորագրով:

Բարեհիշատակ Հակոբ քահանայի հուշերը վերաբերում են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1914–1915 թթ., շուրջ ութ ամիս Հարավարեւմտյան եւ Հյուսիսարեւմտյան ռազմաճակատներում որպես զինվորական քահանա անցկացրած իր շրջանին: Օրագրության ձեւով ներկայացվում են եկեղեցականին հանդիպած հայտնի անձինք, հայ զինվորականներ, բժիշկներ, ինչպես նաեւ նկարագրվում ռազմաճակատում տիրող իրավիճակը եւ պատերազմի թողած ահասարսուռ հետեւանքները:

Գիրքը, որ հրատարակության է պատրաստել Էդգար Հովհաննիսյանը, կարող է կարեւոր սկզբնաղբյուր ծառայել Առաջին աշխարհամարտին Արեւմտյան ռազմաճակատում հայերի ունեցած մասնակցության վերաբերյալ:

– Սբ Գրիգոր Նարեկացու **«Մատյան Ողբերգության»** (Նարեկ) աղոթամատյանի՝ վեցերորդ վերանայված ու լրամշակված հրատարակությունը:

– Պ. գ. թ., դոցենտ Ավետիս Հարությունյանի **«Վան-Վասպուրականի կրոնամշակութային կյանքը եւ պետականության ստեղծման փորձը (1908–1918)»** գիրքը: Հրատարակությունը նվիրված է հայոց պետականության վերականգնման եւ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակին:

Աշխատությունը ներկայացնում է Վան-Վասպուրականի 1908–1918 թթ. պատմությունը, եկեղեցական եւ մշակութային կյանքը, ինչպես նաեւ ազատագրական պայքարն ու պետականության ստեղծման փորձերը:

– Արմեն Ասատրյանի **«Հին Թիֆլիսի հայոց Շամքորեցոց Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Մինաս եկեղեցիները (պատմություն եւ տարեգրություն)»** աշխատությունը:

Ներկա հրատարակությունը «Թիֆլիսի հայկական եկեղեցիները» շարքի երկրորդ գիրքն է՝ նվիրված հիշյալ եկեղեցիների պատմությանը: Այս եկեղեցիները Թիֆլիսի հայ համայնքի պարծանքն էին, սրբացված աղոթատներ, որոնց դռները շուրջ երկու հարյուրամյակ բաց են եղել հավատացյալների համար: Այսօր, սակայն, դրանք խոնարհված են: Հեղինակն անդրադարձել է նաեւ այդ եկեղեցիներում սպասավորություն բերած հոգեւորականների կյանքին ու գործունեությանը: Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:




– Ստեփան Կերտողի **«Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին»** աշխատությունը:

Գիրքը նվիրվում է 1918 թ. մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակին:

Հիշյալ տարիներին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռի գործունեությունը լուսաբանող աշխատության համար ուսումնասիրվել են ՀՀ ազգային արխիվում եւ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող նյութեր, որոնց զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Մենագրության մեջ անդրադարձ է կատարվում նաեւ 1918 թ. մայիսյան հերոսամարտերին մասնակից հայ հոգեւորականներին:

– Պ. գ. թ. Արսեն Հարությունյանի **«Ս. Հռիփսիմե վանքը»** աշխատությունը եւ Արմենուհի Հովհաննիսյանի պատրաստած **Սուրբ Հռիփսիմե վանքի մատենագիտությունը՝** Ս. Հռիփսիմե վանքի 1400-ամյակի առիթով:

Առաջին ուսումնասիրության մեջ հեղինակը կատարել է Ս. Հռիփսիմե վանքի պատմավիմագրագիտական քննությունը: Սրբավայրի պատմությանը զուգընթաց ներկայացված են վանքի շրջակայքում տարբեր տարիներին իրականացված հնագիտական պեղումները, ի հայտ եկած ուշագրավ շինություններն ու առարկաները: Ագաթանգեղոսի «Պատմության» հիման վրա անդրադարձ է կատարվել նաեւ Ս. Հռիփսիմեի վարք-վկայաբանությանը:

Հավելվածում տեղ են գտել նաեւ Մովսես Խորենացու երկու երկ՝ Հռիփսիմյանց կույսերի պատմությունը ներկայացնող բնագիրը եւ նրանց հիշատակին ձոնված ներբողը:

Երկրորդ աշխատությունն առաջին փորձն է մի գրքում ամբողջությամբ ներառելու որեւէ վանք-եկեղեցու մատենագիտությունը:

– Ռուբեն վրդ. Զարգարյանի **«Հիսուս Մարկոսի Ավետարանում (մեկնողական քննություն)»** աշխատությունը:




Ներկա մենագրությունը հեղինակի վարդապետական թեզն է, որը վերջինս պաշտպանել է 2015 թվականին՝ «Հիսուս Մարկոսի Ավետարանում» թեմայով:

Հեղինակն իր ուսումնասիրության մեջ քննել, վերլուծել եւ մեկնաբանել է Հիսուս Քրիստոսի վերաբերյալ այն հիմնական գաղափարներն ու դիտանկյունները, որոնք բնորոշ են մարկոսյան քրիստոսաբանությանը:

– Ներսես վրդ.Դանիելյանցի **«Կյանքն առանց հավատքի (ժողովրդական քարոզներ)»** գրքի առաջին հատորը: Այն հրատարակության է պատրաստել Մայր Աթոռի միաբան Արթուր սրկ. Գեւորգյանը:

Հայոց մեծ եղեռնի նահատակ «Սսի Աթոռի միաբան Ներսես եպս Դանիելյանցը (1868–1915 թթ.) քիչ հայտնի մտավորական հոգեւորականներից է, որը, բացի հոգեւոր սպասավորությունից, զբաղվել է նաեւ ուսուցչությամբ եւ գրական գործունեությամբ: Աշխատակցել է Կ. Պոլսի եւ Իզմիրի թերթերին՝ կենդանության օրոք հրատարակելով նաեւ երկու քարոզգիրք՝ «Կեանք առանց հաւատքի» (1903 թ.) եւ «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» (1912 թ.) վերնագրերով:

Սույն քարոզգիրքը երկրորդ վերահրատարակությունն է եւ ունի կրոնագիտական եւ բարոյախրատական բնույթ:

– Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի բանախոսությունները մեկ ժողովածուով՝ **«Ազգային բանախօսութիւններ»** խորագրի ներքո:

Հատորն ընդգրկում է «Հայուն անցեալը, ներկայն եւ ապագան», «Հայութեան հոգին», «Հայ Ազգութիւն»,«Միութիւն հայութեան», «Կարօտ եմք» եւ «Հայ երիտասարդութիւն» բանախոսությունները: Վերջիններիս մեջ արտացոլված են Օրմանյանի պատմափիլիսոփայական, կրոնագիտական, սոցիալ-բարոյական, քաղաքական եւ սահմանադրական հայեցակարգերը, որոնցում փաստարկվում են ազգագոյության հիմքերը, հայության քաղաքակրթական ինքնությունը, Հայ Եկեղեցու պատմական դերն ու ազգային էությունը, ազգային սահմանադրական քաղաքականության միտումները, ազգի առջեւ հայ անհատների պարտավորությունները ու հայության ապագայի տեսլականը:




Վերոհիշյալ բոլոր գրքերը հրատարակվել են մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

– Հույն Ուղղափառ Եկեղեցու միտրոպոլիտ Երեմիա Ֆունդասի **«Հին Կտակարան. բովանդակությունը եւ աստվածաբանությունը»** երկի հայերեն թարգմանությունը: Աշխատությունը հունարենից հայերեն է թարգմանել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս Գաբրիել քհն. Վարդանյանը: Գիրքը Հին Կտակարանի ամբողջական եւ համակողմանի մի ուսումնասիրություն է, որտեղ նկատի են առնված Հին Կտակարանին վերաբերող նորագույն ուսումնասիրությունների արդյունքները: Հեղինակը նաեւ չի անտեսել աստվածաշնչագիտության մի շարք ուղղությունների, օրինակ՝ սկզբնաղբյուրների, խմբագրությունների եւ օժանդակ գիտությունների քննության եղանակները, հատկապես սուրբգրային հնագիտության եզրահանգումները եւ այլն:

Հրատարակվել է մեկենասությամբ «Լեւոն սարկավագ եւ Արաքսի Զենյան» հիմնադրամի:

– Ալեքսանդր Ա Զուղայեցու (Ամենայն Հայոց Կաթողիկոս, 1706–1714) **«Գիրք Ատենական»** եւ Գեւորգ վրդ. Մխլայիմի **«Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէության»**, **«Վկայութիւնք հայրապետաց յաղագս միոյ բնութեան Քրիստոսի»** եւ **«Յաղագս պահոց»** աշխատությունները, որոնք հրատարակության է պատրաստել Ախթալայի Ս. Աստվածածին վանքի հոգեւոր հովիվ Հեթում քհն. Թարվերդյանը:

18-րդ դարի աստվածաբանական մտքի խոշոր ներկայացուցիչներից են Ալեքսանդր Ա Զուղայեցի Կաթողիկոսը եւ Գեւորգ վրդ. Մխլայիմը, որոնք իրենց հոգեւոր գործունեության ամբողջ ընթացքում պայքարել են հանուն Հայ Եկեղեցու դավանանքի անաղարտության:

Հրատարակվել է Զորջ եւ Արփիկ Շահբազյանների մեկենասությամբ՝ ի հիշատակ իրենց ծնողների՝ Հովակիմ եւ Սառա Շահբազյանների:

– Մանվել սրկ. Սարգսյանի կազմած **«Հայ հոգեւորականների պատվանունների եւ մականունների բացատրական բառարանը»**:

Հրատարակությունը նվիրված է Մաղաքիա արք. Օրմանյանի մահվան 100-րդ տարելիցին:

Բառարանում ընդհանուր առմամբ ներկայացված է Դ դարից մինչեւ մեր օրերի՝ պատվանուն կամ մականուն ունեցած 200 հոգեւորական, որոնց թվում են Ամենայն Հայոց Հայրապետներ, Կիլիկիո ու Աղթամարի Կաթողիկոսներ, Կ. Պոլսի եւ Երուսաղեմի Պատրիարքներ, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու տարբեր թեմերի արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկավագներ: 350 պատվանուն եւ մականուն, որոնց գրեթե երկու երրորդը նախորդիվ ուսումնասիրված չեն եղել:

Հրատարակվել է մեկենասությամբ «Լեւոն սարկավագ եւ Արաքսի Զենյան» հիմնադրամի:




**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
**web կայք՝**
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 28.12.2018 թ.
**Տպաքանակը՝ 1175**